

ՄԵԹԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(Կենսագրական ակնարկ)

Յովհաննէս Մեթեան,– Եօսէյ Վանանթսեսի՝ ինչպէս կը կոչուի նաեւ իր անուան տառերուն շրջումովը,– ծնած է 1853ին, Կ. Պոլիս, Օրթաքէօյի մէջ: Իր նախնական ուսումը թաղին Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ ստացած, 1870ին նուիրուած է ուսուցչական ասպարէզին, Պոլսոյ գլխաւոր վարժարաններուն մէջ աւանդելով մասնաւորապէս հայերէն եւ ֆրանսերէն: Հայկական դէպքերը¹ զինք ալ քշած են Պոլսէն, եւ Մեթեան 1896ին գացած է Գահիիլէ, ուր մինչեւ 1906 պաշտօնավարած է իբրեւ տնօրէն-ուսուցիչ, եւ անկէ ետք ցարդ իբր ուսուցիչ:

Մեթեանի գրական կեանքը կը սկսի 1870ին, ուրկէ ետք հետզհետէ կը սկսի աշխատակցիլ *Մասիսի*, *Թատրոնի*, *Արեւելքի*, *Երկրագունտի*, եւ այլն: Իր առաջին քերթուածները (1870-1882) հրատարակուած են *Գրչի զբօսանքին*² մէջ: *Յուզման ժամերը*³ կը պարունակէ Մեթեանի (1882-1888) գրած բանաստեղծութիւնները: Մեթեան *Բլուրն ի վեր*⁴ կը կոչէ իր այն քերթուածները, գորս գրած է (1888-1896), իսկ *Տարագրին քնարը*⁵ տիտղոսին տակ կը հավաքէ իր Պոլսէն դուրս գրած քերթուածները (1896-1912): Ունի նաեւ *Արձակ էջեր*⁶, որոնք կը պարունակեն նոյն շրջանին մէջ գրուած իր պատմութիւնները եւ պատկերները: Մեթեան գրած է նաեւ ֆրանսերէն քերթուածներ, որոնցմէ յիշենք *Le grand martyr*, *Le sommeil du fedaï*, *La fin d'une journée*, *La plainte des trépassés*, *A la France* եւ *La prière d'un vieillard*: Մեթեանի բոլոր այս քերթուածները հրատարակուած են այս տարի Գահիիլէ միակ հատորի մը մէջ՝ *Արշալոյսէն Վերջալոյս*⁷ տիտղոսուած: